ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N596-Ն ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N1737-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N2024-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի ..... N... - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N596-Ն ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N1737-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N2024-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերը, 3-րդ մասը և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N596-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին կետով հաստատված N1 հավելվածի՝

ա. 73-րդ կետի 3-րդ ենթակետում «2015 թվականի մարտի 19-ի N274 որոշմամբ սահմանված կարգով» բառերը փոխարինել «2025 թվականի դեկտեմբերի 4-ի N1745-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 3-րդ կետի համաձայն» բառերով,

բ. 78-րդ կետում «2015 թվականի մարտի 19-ի N274-Ն որոշմամբ սահմանված կարգով» բառերը փոխարինել «2025 թվականի դեկտեմբերի 4-ի N1745-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 3-րդ կետի համաձայն» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 23-ի «Բնակարանային ֆոնդի տեխնիկական վիճակի հետազննությունների անցկացման և հետազննության արդյունքում տրված եզրակացությունների վարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N274-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N2024-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրից հանել «և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N274-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու» բառերը,

2) որոշման 2-րդ կետը ուժը կորցրած ճանաչել,

3) որոշման 1-ին կետով հաստատված N1 հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետում «2015 թվականի մարտի 19-ի N 274-Ն» բառերը փոխարինել «2025 թվականի դեկտեմբերի 4-ի N1745-Ն» բառերով:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի «Բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական որակավորմանը ներկայացվող պահանջները, այդ պահանջների հիման վրա անձանց վերապատրաստման և բազմաբնակարան շենքերի կառավարմանը նրանց ներգրավման կարգը սահմանելու մասին» N1737-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) որոշման N1 հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի՝

ա. «բ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի

դեկտեմբերի 4-ի «Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության կարգը հաստատելու մասին» N 1745-Ն որոշում,»

բ. «դ» պարբերությունից հետո լրացնել նոր «ե» պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«ե. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 23-ի «Բնակարանային ֆոնդի տեխնիկական վիճակի հետազննությունների անցկացման և հետազննության արդյունքում տրված եզրակացությունների վարման կարգը հաստատելու մասին» N2024-Ն որոշում.»:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: